ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և նրա առանձնացված ստորաբաժանումների վեբկայքերի վերաբերյալ

Ներկայումս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում առկա են հետևյալ վեբկայքերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱՍՀՆ) պաշտոնական վեբկայք՝ www.mss.am,
2. "Զբաղվածության պետական ծառայություն" գործակալության վեբկայք (այսուհետ՝ ԶՊԾԳ)՝ www.employment.am,
3. Աշխատանքի պետական տեսչության (այսուհետ՝ ԱՊՏ) վեբկայք՝ www.apt.am,
4. "Նորք" տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ (այսուհետ՝ "Նորք" կենտրոն) վեբկայք՝ www.norq.am,
5. Հաշմանդամության ոլորտի վեբկայք՝ www.disabilityarmenia.am,
6. Սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ ՍԱՊԾ) վեբկայք՝ www.sif.am,
7. ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (այսուհետ՝ ԲՍՓԳ) վեբկայք՝ www.hhbsp.am:

www.mss.am, www.employment.am, www.apt.am, www.norq.am և www.disabilityarmenia.am վեբկայքերը մշակվել և մինչ օրս սպասարկվում են "Նորք" կենտրոնի կողմից:

www.sif.am և www.hhbsp.am վեբկայքերի սպասարկումն իրականացվում է համապատասխանաբար ՍԱՊԾ և ԲՍՓԳ ներքին ռեսուրսներով:

1. www.mss.am վեբկայքի ընթացիկ սպասարկումը, որն իր մեջ ներառում է նաև վեբկայքի անընդհատ կատարելագործում, իրականացվում է "ՀՀ ԱՍՀՆ կարիքների համար հեռահաղորդակցության ցանցի, տվյալների փոխանցման, mss.am պորտալ համակարգի և հաշվողական տեխնիկայի (համակարգիչների) նորոգման, տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման" պայմանագրի շրջանակներում: Սույն պայմանագրի արժեքը ըստ տարիների ներկայացված է ստորև.

Հ/Հ	Տարի	Պայմանագրի արժեք (ՀՀ դրամ)
1.	2009թ.	6,478,100
2.	2010թ.	5,179,100
3.	2011թ.	5,160,200

Ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

2. www.employment.am վեբկայքը 2010 թվականին կատարելագործվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) աջակցությամբ: Այդ աշխատանքների արժեքը կազմել է 10.300 ԱՄՆ դոլար: Վեբկայքի բովանդակային և տեխնիկական ընթացիկ սպասարկումն իրականացվում է համապատասխանաբար ԶՊԾԳ և "Նորք" կենտրոնի կողմից:

3. www.apt.am վեբկայքը 2009 թվականին արդիականացվել է "Նորք" կենտրոնի կողմից, իսկ վեբկայքի ընթացիկ սպասարկումն իրականացվում է ԱՊՏ ներքին ռեսուրսներով:

4. www.norq.am վեբկայքը 2009 թվականին արդիականացվել և մինչ օրս սպասարկվում է "Նորք" կենտրոնի ներքին ռեսուրսներով:

5. www.disabilityarmenia.am վեբկայքը մշակվել է 2010 թվականին "Վորլդ Վիժն Ինտերնեշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ: Այդ աշխատանքների արժեքը կազմել է 1.396.700 ՀՀ դրամ: Վեբկայքի բովանդակային և տեխնիկական ընթացիկ սպասարկումն իրականացվում է համապատասխանաբար ՀՀ ԱՍՀՆ Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության և "Նորք" կենտրոնի կողմից: